CONSEIL DE L'EUROPE | COUNCIL OF EUROPE

COUR EUROPEENNE DES DROITS DE L'HOMME
EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS

ԵՐՐՈՐԴ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

ԳԱՍՊԱՐՅԱՆՆ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ (թիվ 1)
(Գանգատ թիվ 35944/03)

ՎՃԻՌ

ՍՏՐԱՍԲՈՒՐԳ

13 հունվար 2009

ՈՒԺԻ ՄԵՋ Է ՄՏԵԼ

13/04/2009

Սույն վճիռը վերջնական է դառնում Կոնվենցիայի 44-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված կարգով:
Այն կարող է ենթարկվել խմբագրական փոփոխությունների:

Գասպարյանն ընդդեմ Հայաստանի վճիռ (թիվ 1)

Գասպարյանն ընդդեմ Հայաստանի գործով

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (Երրորդ Բաժանմունք) Պալատը, հետևյալ կազմով՝
Josep Casadevall, Նախագահ,
Elisabet Fura-Sandstrom,
Corneliu Birsan,
Bostjan M. Zupancic,
Alvina Gyulumyan,
Egbert Myjer,
Ineta Ziemele, դատավորներ,
և Stanley Naismith, Բաժանմունքի քարտուղարի տեղակալ,

2008 թ. դեկտեմբերի 9-ին կայացած դռնփակ նիստում,
Կայացրեց հետևյալ վճիռը, որն ընդունվեց նույն օրը.

ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

1. Գործը սկիզբ է առել 2003 թ. հոկտեմբերի 30-ին Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության կոնվենցիայի («Կոնվենցիա») 34-րդ հոդվածի համաձայն Հայաստանի քաղաքացի Մաքսիմ Գասպարյանի (»դիմումատու») կողմից ընդդեմ Հայաստանի Հանրապետության բերված թիվ 35944/03 գանգատի հիման վրա:

2. Դիմումատուին ներկայացնում էին Լոնդոնում գործող Մարդու Իրավունքների Քրդական Ծրագրի (KHRP) իրավաբաններ պրն Մ. Մյուլլերը, պրն Թ. Օթթին, պրն Ք. Ցիլդիզը, տկն Ա. Սթոքը և տկն Լ. Քլարիջը և Երևանում գործող փաստաբան պրն Տ. Տեր-Եսայանը և պրն Ա. Ղազարյանը: ՀՀ Կառավարությունը («Կառավարություն») ներկայացնում էր Մարդու իրավունքների եվրոպական դատարանում ՀՀ Կառավարության լիազոր ներկայացուցիչ պրն Գ. Կոստանյանը:

3. 2005 թ. սեպտեմբերի 6-ին Երրորդ բաժանմունքի նախագահը որոշեց գանգատն ուղարկել Կառավարությանը: Կոնվենցիայի 29-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն Դատարանը որոշեց իրականացնել գործի ընդունելիության և ըստ էության միաժամանակյա քննություն:

ՓԱՍՏԵՐԸ

I. ԳՈՐԾԻ ՓԱՍՏԱԿԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ

4. Դիմումատուն ծնվել է 1948 թ. և ապրում է Երևանում:

5. 2003 թ. Հայաստանում կայացան նախագահական ընտրություններ առաջին և երկրորդ փուլերով՝ համապատասխանաբար փետրվարի 19-ին և մարտի 5-ին: Այս ընտրություններում դիմումատուն հանդես է եկել որպես հիմնական ընդդիմադիր թեկնածուի վստահված անձ: Ընտրությունների առաջին և երկրորդ փուլերից հետո ընդդիմադիր կուսակցությունների կողմից Երևանում մի շարք բողոքի երթեր կազմակերպվեցին:

6. Համաձայն գործի նյութերի՝ 2003 թ. փետրվարի 23-ին դիմումատուն մասնակցել է այն երթերից մեկին: Դիմումատուն ժխտել է այս փաստը և պնդել, որ նա չի մասնակցել երթերին:

7. 2003 թ. փետրվարի 26-ին, առավոտյան ժամը 8-ին դիմումատուին այցելել են ՀՀ ոստիկանության Շենգավիթի բաժնի երկու աշխատակիցներ: Նրան տեղեկացրել են, որ Շենգավիթի բաժնի ոստիկանության պետը ցանկանում է խոսել իր հետ և նրան տարել են ոստիկանության բաժին:

8. Ոստիկանության բաժնում դիմումատուի դեմ հարուցվել է վարչական գործ և նա Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի (ՎԻՎՕ) 172-րդ հոդվածով մեղադրվել է մանր խուլիգանության մեջ այն հիմքով, որ նա 2003 թ. փետրվարի 23-ին մասնակցել է չարտոնված ցույցի և խախտել է հասարակական կարգը:

9. Նույն օրը՝ մի քանի ժամ անց, դիմումատուին տարել են Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարան: Այնտեղ նրան ուղեկցել են դատավոր Հ-ի մոտ, ով կարճատև նիստից հետո դիմումատուին՝ համաձայն նրան առաջադրված մեղադրանքի մեղավոր է ճանաչել և նշանակել 10-օրյա վարչական կալանք՝ գտնելով, որ.

«Երևան քաղաքում 2003 թ. փետրվարի 23-ին [դիմումատուն] Մաշտոցի պողոտայում մի խումբ անձանց հետ միասին մասնակցել է չարտոնված ցույցի և երթի և խախտել է հասարակական կարգը»:

10. Որոշման մեջ նշված էր, որ համաձայն ՎԻՎՕ-ի 289-րդ հոդվածի այն կարող է բողոքարկվել դատախազի կողմից:

11. Դիմումատուին տարել են կալանավայր պատիժը կրելու:

12. Դիմումատուի պնդմամբ 2003 թ. մարտի 1-ին իր խցից իրեն տարել են մեկ այլ սենյակ: Այս սենյակի սեղանի վրա եղել է դիմումի երկու օրինակ, որից մեկը հանձնել են նրան ցուցումով, որ վրան գրի իր անունը և ստորագրի այն: Դիմումի բովանդակությունը հետևյալն էր. «Կատարվածի համար զղջում եմ և խնդրում եմ գործս վերանայել»: Այս խնդրանքը հասցեագրված էր ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի նախագահին: Դիմումատուն պնդում էր, որ նա ստիպված էր ստորագրել այս փաստաթուղթը, չնայած որ նա համաձայն չէր բովանդակության հետ, որպեսզի նրան ազատ արձակեին և նա ի վիճակի լիներ կատարել իր պարտականությունները որպես վստահված անձ նախագահական ընտրությունների երկրորդ փուլի ժամանակ:

13. Նույն օրը ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի նախագահը վերանայեց դիմումատուին պատասխանատվության ենթարկելը՝ գտնելով, որ.

«[Դիմումատուն համաձայն առաջին ատյանի դատարանի որոշման, ենթարկվել է վարչական կալանքի]... որ նա, 2003 թ. փետրվարի 23-ին մասնակցելով չարտոնված միտինգի, խանգարել է հասարակական կարգը:

Ծանոթանալով [դիմումատուի] բողոքին և վարչական իրավախախտման վերաբերյալ կազմված նյութերին, գտնում եմ, որ անհրաժեշտ է [դիմումատուի նկատմամբ] տույժի միջոցը փոխել:»

14. Նախագահը փոխեց պատժամիջոցը՝ նշանակելով վարչական տուգանք 2,000 Հայկական դրամ (մոտավորապես 3 Եվրո այդ պահի դրությամբ) և կարգադրեց կալանքից ազատել դիմումատուին:

15. Նույն օրը երեկոյան դիմումատուին ազատ արձակեցին իր պատժաչափից մոտ երեք օրը կրելուց հետո:

16. 2003 թ. մարտի 26-ին դիմումատուն դիմում է ուղարկել ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ վճռաբեկ դատարան և ՀՀ Նախագահին առընթեր մարդու իրավունքների հարցերի հանձնաժողով՝ պնդելով, որ նա երբեք չի մասնակցել որևէ ցույցի և մասնավորապես 2003 թ. փետրվարի 23-ի ցույցին՝ նպատակ ունենալով հասնել իր գործի վերանայմանը:

17. Վճռաբեկ դատարանը 2003 թ. ապրիլի 3-ի նամակով դիմումատուի դիմումն ուղարկում է քննության Քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարան:

18. ՀՀ արդարադատության նախարարությունը 2003 թ. ապրիլի 11-ի նամակով դիմումատուին տեղեկացնում է, որ վարչական պատասխանատվության ենթարկվող անձանց իրավունքները սահմանված են ՎԻՎՕ-ի 276-րդ հոդվածում և դիմումատուն պետք է դա վիճարկեր գործի քննության ժամանակ: Նամակում այնուհետև նշված էր, որ 2003 թ. փետրվարի 26-ի որոշումը կարող էր բողոքարկվել դատախազի կողմից:

19. ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի նախագահը 2003 թ. ապրիլի 16-ի նամակով դիմումատուին տեղեկացրել է, որ 2003 թ. մարտի 26-ի դիմումը

չէր կարող քննվել, քանի որ դիմումատուն բաց էր թողել բողոքարկման համար սահմանված տասնօրյա ժամկետը:

20. 2003 թ. ապրիլի 17-ին ուղարկված նամակով ՀՀ գլխավոր դատախազությունը նույնանման պատասխան տվեց դիմումատուի՝ Մարդու իրավունքների հանձնաժողովին հասցեագրված դիմումին:

21. 2003 թ. ապրիլի 27-ին դիմումատուն կրկին բողոքում է Արդարադատության նախարարությանը, որ 2003 թ. փետրվարի 26-ի որոշումը անօրինական էր, քանի որ նա որևէ ցույցի չի մասնակցել:

22. 2003 թ. մայիսի 6-ի նամակով Արդարադատության նախարարությունը տալիս է նույն պատասխանը:

23. 2003 թ. հունիսի 10-ին Դատական ակտերի հարկադիր կատարման ծառայությունը («ԴԱՀԿ») հարուցել է կատարողական վարույթ՝ համաձայն 2003 թ. մայիսի 15-ի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքի առաջին ատյանի դատարանի կողմից տրված կատարողական թերթի:

24. Դիմումատուն պնդում է, որ այդ ժամանակահատվածում նրան այցելել են ԴԱՀԿ-ի ծառայողներ, որոնք նրան տեղեկացրել են, որ 2003 թ. փետրվարի 26-ի որոշումը վերանայվել է 2003 թ. մարտի 1-ին և ենթարկվել է տուգանքի: Նա պնդում էր, որ հետո է տեղեկացել Քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի նախագահի 2003 թ. մարտի 1-ի որոշման գոյության մասին: Դիմումատուն վճարել է տուգանքը:

25. 2003 թ. հունիսի 12-ին ԴԱՀԿ-ն դադարեցրել է կատարողական վարույթը, քանի որ վարույթի պահանջները կատարվել էին:

II. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ՕՐԵՆՄԴՐՈՒԹՅՈՒՆԸ

26. Համապատասխան ներպետական դրույթների, միջազգային փաստաթղթերի ու զեկույցների վերաբերյալ համառոտ նկարագրությունը տե՛ս Գալստյանն ընդդեմ Հայաստանի վճիռը (թիվ 26986/03, պարբ. 25-32, 15 նոյեմբեր 2007 թ.):

ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՐՑԵՐ

I. ՎԵՑԱՄՍՅԱ ԿԱՆՈՆԻ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ 2003 Թ. ՓԵՏՐՎԱՐԻ 26-Ի ՈՐՈՇՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ

27. Դիմումատուն ներկայացրել է մի շարք բողոքներ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ մասերի, 6-րդ հոդվածի 1-ին և 3-րդ (ա-դ) մասերի, 11-րդ հոդվածի, 13-րդ և 14-րդ հոդվածների և 1-ին Արձանագրության 3-րդ հոդվածի հիման վրա 2003 թ. փետրվարի 26-ին իրեն պատասխանատվության ենթարկելու կապակցությամբ:

28. Դատարանը կրկնում է, որ Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն այն կարող է գործը քննության առնել միայն այն դեպքում, երբ այն ներկայացվել է վեց ամսվա ընթացքում՝ սկսած այն օրվանից, երբ ներպետական պաշտպանության միջոցները սպառելու գործընթացի շրջանակներում կայացվել է վերջնական որոշում (տե՛ս այլոց շարքում Դանովն ընդդեմ Բուլղարիայի (Danov v. Bulgaria), թիվ 56796/00, պարբ. 56, 26 հոկտեմբեր 2006 թ.): Այնուամենայնիվ, 35-րդ հոդվածով նախատեսված պարտավորությունը պահանջում է միայն, որ դիմումատուն պետք է կանոնավոր կերպով դիմի այն պաշտպանության միջոցներին, որոնք ամենայն հավանականությամբ արդյունավետ են, բավարար և մատչելի (տե՛ս այլ նախադեպերի շարքում Սեյդովիչն

ընդդեմ Իտալիայի (Sejdovic v. Italy) (ՄՊ), թիվ 56581/00, պարբ. 45, ՄԻԵԴ 2006-III): Երբ որևէ արդյունավետ միջոց դիմումատուին հասանելի չէ, ժամկետը լրանում է ակտերի կամ միջոցների բողոքարկման օրվանից կամ դիմումատուին այդ ակտի կամ այդ ակտի գործողության կամ դրանով հասցված վնասի մասին հայտնի դառնալու օրվանից վեց ամիս հետո (տես Յանգերն ընդդեմ Միացյալ Թագավորության (Younger v. the United Kingdom) (որոշում), թիվ 57420/00, ECHR 2003-I): Այսպես, վերը նշված պահանջներին չհամապատասխանող պաշտպանության միջոցներին դիմելը ազդեցություն կունենա որոշելիս, թե որն է համարվում «վերջնական որոշում» և, համապատասխանաբար, վեցամսյա ժամկետի սկզբի հաշվարկման վրա (տե՛ս Փրիսթավսկան ընդդեմ ՈՒկրաինայի (Prystavska v. Ukraine (dec.)) թիվ 21287/02, 17 դեկտեմբեր 2002 թ.):

29. Անդրադառնալով սույն գործի հանգամանքներին՝ Դատարանը նշում է, որ դիմումատուն իր գանգատում մի շարք բողոքներ է բերել Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 2003 թ. փետրվարի 22-ի որոշման դեմ: Այս որոշումը, սակայն, վերջնական էր, և սպառելու համար չկային բավականաչափ մատչելի և արդյունավետ այլ միջոցներ, ներառյալ այն արտակարգ միջոցները, որոնք կարող էին ձեռնարկվել ՎԻՎՕ-ի 294-րդ հոդվածի հիման վրա դատախազի կամ վերադաս դատարանի նախագահի միջոցով (տե՛ս Գալստյան՝ մեջբերված վերևում, պարբ. 40-42): Այնուամենայնիվ, դիմումատուն փորձեց այդ միջոցներից մեկը՝ Գլխավոր դատախազին բողոքարկման պահանջ ներկայացնելով (տե՛ս պարբ. 12): 2003 թ. մարտի 1-ին ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի նախագահը որոշում է դիմումատուի արտակարգ բողոքի հիման վրա վերանայել առաջին ատյանի դատարանի 2003 թ. փետրվարի 26-ի վերջնական որոշումը: Դիմումատուն իր գանգատը Դատարանին ներկայացրել է 2003 թ. հոկտեմբերի 30-ին, որը ավելի է վեց ամսից՝ առաջին ատյանի դատարանի որոշման կայացման օրվանից սկսած, բայց վեց ամսից պակաս՝ Վերաքննիչ դատարանի որոշման օրվանից սկսած: Հետևաբար անհրաժեշտ է պարզել, թե արդյոք դիմումատուի արտակարգ բողոքի հիման վրա կայացված Վերաքննիչ դատարանի որոշումը վերսկսել է վեց ամսվա ժամկետի ընթացքը այնքանով, որքանով դա վերաբերում է առաջին ատյանի դատարանի վերջնական որոշմանը:

30. Դատարանը նշում է, որ այն հետևողականորեն մերժել է այն գանգատները, որոնցում դիմումատուները ներկայացրել էին իրենց բողոքները դատաքննությունները վերսկսելու մասին իրենց պահանջները մերժող որոշումներից սկսած վեց ամսվա ընթացքում այն հիմքով, որ նման որոշումները չեն կարող համարվել «վերջնական» Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով (տե՛ս, այլ նախադեպերի շարքում, Բերձենիշվիլին ընդդեմ Ռուսաստանի (Berdzenishvili v. Russia) (որոշում) թիվ 31697/03, ՄԻԵԴ 2004-II, Ռիեդլ-Ռիեդենշթեյնը և այլոք ընդդեմ Գերմանիայի (Riedl-Riedenstein and Others v. Germany) (որոշում) թիվ 48662/99, 22 հունվար 2002, և Բաբինսկին ընդդեմ Սլովակիայի (Babinsky v. Slovakia) (որոշում) թիվ 35833/97, 11 հունվար 2000): Այնուամենայնիվ, Դատարանը նաև ընդունել է, որ այն իրավիճակները, երբ դատավարությունը վերսկսելու խնդրանքը հաջողակ է և իսկապես հանգեցնում է վերսկսման, կարող են լինել այս կանոնի բացառություն (տե՛ս Փաֆլերն ընդդեմ Ֆրանսիայի (Pufler v. France), թիվ 23949/94, Հանձնաժողովի որոշում, 18 մայիս 1994 թ., Որոշումներ և Զեկույցներ 77-Բ, էջ 140, Քորքմազն ընդդեմ Թուրքիայի (Korkmaz v. Turkey) (որոշում) թիվ 42576/98, 17 հունվար 2006 թ., և Աթքինն ընդդեմ Թուրքիայի (Atkin v. Turkey), թիվ 39977/98, պարբ. 33, 21 փետրվար 2006 թ.):

31. Երևում է, որ սույն գործում առկա իրավիճակը կարող է դասվել բացառիկ գործերի շարքին՝ հիմք ընդունելով, որ դիմումատուի օգտագործած արտակարգ պաշտպանության

միջոցը փաստորեն հանգեցրել է իր վարչական գործով վերջնական որոշման վերանայման: Դատարանը, սակայն, չի գտնում, որ դատաքննության վերաբացման միայն փաստը կվերսկսի վեցամսյա ժամկետի մեկնարկը: Չի բացառվում, որ գործը կարող է վերաբացվել Կոնվենցիային չվերաբերող գանգատների հիման վրա, որոնք դիմումատուն կարող է ավելի ուշ ներկայացնել Դատարան, և Դատարանը կասկածում է, որ նման վերաբացումը ազդեցություն կթողնի վեցամսյա ժամկետի հաշվարկման վրա: Քանի որ 35-րդ հոդվածի 1-ին մասը չի կարող մեկնաբանվել այնպես, որ դիմումատուից պահանջվի դիմել Դատարան մինչև իր գանգատի հետ կապված իր դիրքորոշումը վերջնական կարգավորում է ստացել ներպետական մակարդակում (տե՛ս Փեթրին և այլոք ընդդեմ Միացյալ Թագավորության (Petrie and Others v. the United Kingdom) (որոշում) թիվ 29703/05, 6 փետրվար 2007). դա նշանակում է, որ այդ հոդվածով դիմումատուից պահանջվում է դիմել Դատարան այն ժամանակ, երբ իր գանգատի հետ կապված իր դիրքորոշումը վերջնական կարգավորում է ստացել և գործի վերաբացումը Կոնվենցիոն գանգատներին չվերաբերող հիմքերով չի ազդի այդ որոշակի խնդրի վերջնական որոշման վրա: Դատարանն այդ պատճառով գտնում է, որ այն դեպքերում, երբ դատավարությունը վերաբացվել է կամ վերանայվել է վերջնական որոշումը, վեցամսյա ժամկետի ընթացքը սկզբնական դատավարության կամ վերջնական որոշման հետ կապված ընդհատվում է միայն Կոնվենցիային վերաբերող այն հարցերի առնչությամբ, որոնք հիմք են ծառայել նման վերանայման կամ վերաբացման համար և ոչ սովորական վերաքննիչ մարմնի կողմից իրականացվող քննության առարկա են եղել: Սրանից տարբերվող մոտեցումը նույնպես կհակասեր սուբսիդիարության սկզբունքին, որի վրա հիմնված է Կոնվենցիայի մեխանիզմը և որը պահանջում է, որ միջազգային մակարդակով ներկայացված գանգատները նախ պետք է ըստ էության քննության առնվեն ներպետական դատարանների կողմից (տե՛ս Ազինասն ընդդեմ Կիպրոսի (ՄՊ) (Azinas v. Cyprus [GC], թիվ 56679/00, պարբ. 38, ՄԻԵԴ 2004-III):

32. Սույն գործով Դատարանը նշում է, որ դիմումատուն Վերաքննիչ դատարան ներկայացրած իր արտակարգ բողոքում ո՛չ ուղղակի, ո՛չ էլ անուղղակի ձևով չի բարձրացրել գրեթե բոլոր այն գանգատները, որոնք նա այժմ ներկայացրել է Դատարան (տես վերը՝ պարբ. 27): Դատարանն այնուհետև նշում է, որ Վերաքննիչ դատարանը իր նախաձեռնությամբ նաև չի անդրադարձել այդ խնդիրներից որևէ մեկին, բացի ՎԻՎՕ-ի 180.1 հոդվածով դիմումատուի դատապարտումը հաստատելուց և առաջին ատյանի դատարանի կողմից նշանակված պատիժը փոփոխելուց: Այսպիսով, դիմումատուի կողմից առաջին ատյանի դատարանի որոշման կապակցությամբ Դատարան ներկայացված բողոքները, բացառությամբ խաղաղ հավաքների ազատության նրա իրավունքի ենթադրյալ անօրինական միջամտության, չեն հանդիսացել Վերաքննիչ դատարանի կողմից քննության առարկա, և այն հիմքերը, որոնցից ելնելով Վերաքննիչ դատարանը որոշել էր վերանայել առաջին ատյանի դատարանի վերջնական որոշումը, չեն կարող որևէ կերպ դիտարկվել որպես այն բողոքներին առնչություն ունեցող: Դատարանը հետևաբար եզրակացնում է, որ Վերաքննիչ դատարանի կողմից առաջին ատյանի դատարանի վերջնական որոշման վերանայումը դիմումատուի ոչ սովորական բողոքի հիման վրա չի վերսկսել վեցամսյա ժամկետի ընթացքը այդ բողոքների առնչությամբ:

33. Դրանից հետևում է, որ 2003 թ. փետրվարի 26-ի որոշման վերաբերյալ դիմումատուի գանգատները ներկայացվել են ժամկետի խախտմամբ և Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերին համապատասխան պետք է մերժվեն:

II. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 11-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄԸ 2003 Թ. ՄԱՐՏԻ 1-Ի ՈՐՈՇՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

34. Դիմումատուն բողոքել է, որ իր մեղադրանքն անօրինական միջամտություն էր Կոնվենցիայի 11-րդ հոդվածով երաշխավորված իր իրավունքներին, որը համապատասխանաբար ամրագրում է.

«1. Յուրաքանչյուր ոք ունի խաղաղ հավաքների ազատության իրավունք...

2. Այս իրավունքների իրականացումը ենթակա չէ որևէ սահմանափակման, բացի նրանցից, որոնք նախատեսված են օրենքով և անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության կամ հասարակության անվտանգության, անկարգությունները կամ հանցագործությունները կանխելու, առողջությունը կամ բարոյականությունը կամ այլ անձանց իրավունքներն ու ազատությունները պաշտպանելու նպատակով...»:

Ա. Ընդունելիությունը

35. Կառավարությունը պնդել է, որ դիմումը 2003 թ. հոկտեմբերի 30-ին ուղարկելով՝ դիմումատուն չի պահպանել վեցամսյա ժամկետը՝ կապված 2003 թ. մարտի 1-ի ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի որոշման հետ: Դիմումատուի պնդումը, որ նա տեղյակ չի եղել այդ որոշման մասին մինչև 2003 թ. հունիս անհիմն էր, որովհետև նրան ազատ են արձակել նույն օրը այդ որոշման համաձայն: Ավելին, այդ որոշումը կայացվել է դիմումատուի՝ 2003 թ. մարտի 1-ին բերած բողոքի հիման վրա: Այդ իսկ պատճառով վեցամսյա ժամկետը պետք է հաշվարկեր այդ օրվանից:

36. Դիմումատուն պնդել է, որ տեղյակ չի եղել 2003 թ. մարտի 1-ի որոշմանը մինչև 2003 թ. հունիս, երբ նրան այցելել են ԴԱՀԿ-ի ծառայողները այդ որոշման կատարման նպատակով: Կառավարությունը չի ներկայացրել որևէ ապացույց առ այն, որ նա տեղյակ է եղել իրեն ազատ արձակելու պատճառների մասին ազատ արձակման պահին: Ավելին՝ նա ներկա չի գտնվել Վերաքննիչ դատարանի նիստին: Հետևաբար, Վերաքննիչ դատարանը պարտավոր էր իրեն տեղեկացնել իր բողոքի արդյունքի մասին: Ինչ վերաբերում է վերջինիս՝ նա անգամ տեղյակ չի եղել, որ Վերաքննիչ դատարան բողոք էր ներկայացվել: Նա միայն հիշում էր հայտարարություն ստորագրելը, որով նա զղջում էր իր գործողությունների համար: Վերջապես գործի վերանայում պահանջող նրա հետագա նամակների պատասխաններից որևէ մեկում չէր նշվում, որ բողոքը քննվել էր:

37. Դատարանը կրկնում է իր նախադեպային իրավունքում ընդունված հիմնական սկզբունքները վեցամսյա կանոնի վերաբերյալ (տես վերը՝ պարբ. 28): Դատարանն այնուհետև նշում է, որ Կառավարությունն է պարտավոր մատնանշել այն օրը, երբ դիմումատուն տեղեկացել է վերջնական որոշման մասին, եթե այն վիճարկում է վեցամսյա կանոնի պահպանման փաստը (տե՛ս Ալի Սահմոն ընդդեմ Թուրքիայի (Ali Sahmo v. Turkey), գործը (որոշում), թիվ 37415/97, 2003 թ. ապրիլի 1): Սույն գործում կառավարությունը պնդել է, որ դիմումատուն 2003 թ. մարտի 1-ի որոշմանը տեղեկացել է այդ նույն օրը, որովհետև այդ որոշման հետևանքով նրան ազատ են արձակել: Դատարանի համար, սակայն, այս փաստարկը համոզիչ չէ: Ճիշտ է դիմումատուն կալանքից ազատվել է մինչև տասնօրյա ժամկետով տույժի լրանալը: Սակայն կառավարությունը չի ներկայացրել որևէ ապացույց, որ դիմումատուին երբևէ տեղեկացրել են Վերաքննիչ դատարանի որոշման կրկնօրինակը նրան հանձնելու միջոցով

կամ այլ կերպ այն մասին, որ Վերաքննիչ դատարանը քննել է և որոշում է կայացրել 2003 թ. մարտի 1-ին դիմումատուի բերած վերանայման բողոքի հիման վրա մինչև 2003 թ. հունիսին ԴԱՀԿ-ն նրանից պահանջել է կատարել այդ որոշման պահանջները: Դիմումատուի ազատ արձակման փաստն ինքնին բավարար չէ եզրակացնելու, որ նա անկասկած տեղյակ է եղել 2003 թ. մարտի 1-ի որոշման մասին՝ հատկապես հաշվի առնելով, որ Վերաքննիչ դատարանում գործի վերանայումը սովորական քննության մաս չէր կազմում (տե՛ս Գալստյան (Galstyan), մեջբերված վերևում, պարբ. 41): Իսկապես, այն փաստը, որ դիմումատուն ազատ արձակվելուց հետո շարունակում էր այդ որոշման վերանայման փորձերը, վկայում է այն մասին, որ նա հավանաբար տեղյակ չէր, որ վերանայում արդեն տեղի էր ունեցել: Այդ ընթացքում դիմումատուի կողմից ստացված որևէ պատասխան 2003 թ. մարտի 1-ի որոշման վերաբերյալ որևէ հիշատակում չէր պարունակում: Ավելին, բավականին զարմանալի է, որ ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի նախագահն անձամբ, երբ 2003 թ. ապրիլի 16-ի նամակով մերժել էր քննել դիմումատուի 2003 թ. մարտի 26-ի վերանայման դիմումը, դա կատարել էր այն հիմքով, որ այս դիմումը ներկայացվել էր ժամկետանց և ոչ այն հիմքով, որ բողոքն իր կողմից արդեն քննվել էր 2003 թ. մարտի 1-ին: Հաշվի առնելով բոլոր վերը նշված հանգամանքները՝ Դատարանը Կառավարության դիրքորոշումը համոզիչ չի համարում, և վերջինիս առարկությունը կապված դիմումատուի կողմից վեցամսյա ժամկետի բաց թողնման հետ ենթակա է մերժման:

38. Դատարանը լրացուցիչ նշում է, որ այս գանգատը Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ մասի իմաստով ակնհայտորեն անհիմն չէ: Այնուհետև այն նշում է, որ գանգատն անընդունելի չէ որևէ այլ հիմքով: Հետևաբար այն պետք է ճանաչվի ընդունելի:

Բ. Գործի ըստ էության քննությունը

39. Կառավարությունը պնդել է, որ դիմումատուի ազատության և խաղաղ հավաքների իրավունքը չի խախտվել, քանի որ նա ՎԻՎՕ-ի 172-րդ հոդվածով մեղադրվել է մանր խուլիգանության մեջ: Ամեն դեպքում, եթե անգամ ենթադրենք, որ տեղի է ունեցել միջամտություն, դա նախատեսված էր օրենքով, հետապնդում էր իրավաչափ նպատակ և անհրաժեշտ էր ժողովրդավարական հասարակությունում, քանի որ դիմումատուն կատարել էր պարսավելի գործողություններ:

40. Դիմումատուն պնդել է, որ մանր խուլիգանության մեջ իրեն մեղադրելը հիմնված էր իր կողմից ցույցին մասնակցելու փաստի վրա և հետևաբար միջամտություն էր հանդիսացել 11-րդ հոդվածով երաշխավորված իր իրավունքներին: Իր կողմից ենթադրաբար կատարված հասարակական կարգի խախտման հանցանքի վերաբերյալ մանրամասնությունների բացակայության պարագայում իր մասնակցության փաստը միայն որակվել էր հասարակական կարգի խախտում: Ավելին, ՎԻՎՕ-ի 172-րդ հոդվածը շատ անորոշ էր և միջամտությունը իրավաչափ նպատակ չէր հետապնդել և այն անհրաժեշտ չէր ժողովրդավարական հասարակությունում:

41. Դատարանը նկատում է, որ այն արդեն քննել է մի շարք գործեր Հայաստանի դեմ, որտեղ դիմումատուները, ում գործողությունները պաշտոնապես որակվել են որպես «մանր խուլիգանություն» փաստորեն մեղադրվել են խաղաղ ցույցերին մասնակցելու համար, և գտել է, որ այսպիսի մեղադրանքները հանդիսացել են ազատության և խաղաղ հավաքների իրավունքի խախտում (տե՛ս Գալստյան (Galstyan), մեջբերված վերևում, պարբ. 100-102 և Աշուղյանն ընդդեմ Հայաստանի (Ashughyan v. Armenia), գործը (որոշում), թիվ 33268/03, պարբ. 75-77, 17 հուլիս 2008 թ.): Դատարանը որևէ պատճառ չի

տեսնում սույն գործում այլ մոտեցում ցուցաբերելու համար և եզրակացնում է, որ 2003 թ. մարտի 1-ի ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի նախագահի որոշումը հանդիսացել է դիմումատուի՝ խաղաղ հավաքների ազատության իրավունքի միջամտություն:

42. Վերադառնալով այն հարցին, թե արդյոք միջամտությունը արդարացված էր, Դատարանը կրկնում է, որ որպեսզի միջամտությունը չխախտի 11-րդ հոդվածը, այն պետք է լինի «նախատեսված օրենքով», հետապնդի այս հոդվածի 2-րդ մասով ամրագրված մեկ կամ մի քանի իրավաչափ նպատակ և լինի «անհրաժեշտ ժողովրդավարական հասարակությունում» այդ նպատակներին հասնելու համար: Դատարանը արդեն գտել է համանման հանգամանքներում, որ միջամտությունը ՎԻՎՕ-ի 172-րդ հոդվածի հիման վրա առաջադրված մեղադրանքի ձևով համապատասխանում է օրինականության պահանջին (տե՛ս Գալստյան (Galstyan), մեջբերված վերևում, պարբ. 107 և Աշուղյան (Ashughyan), մեջբերված վերևում պարբ. 81 և 82): Ավելին, այս գործերի նման սույն գործում դիմումատուին պատասխանատվության ենթարկելը հետապնդել է «անկարգության կանխման» իրավաչափ նպատակը (տե՛ս Գալստյան (Galstyan), մեջբերված վերևում, պարբ. 110 և Աշուղյան (Ashughyan), մեջբերված վերևում, պարբ. 85):

43. Ինչ վերաբերում է միջամտության անհրաժեշտությանը՝ Դատարանը կրկնում է, որ խաղաղ հավաքներին մասնակցելու ազատությունը այնչափ կարևոր է, որ անձը չի կարող պատժի ենթարկվել՝ անգամ այնպիսի պատժի, որը գտնվում է կարգապահական տույժերի սանդղակի ամենացածր մակարդակի վրա, այնպիսի ցույցին մասնակցելու համար, որը չէր արգելվել, քանի դեռ այդ անձը նման միջոցառման ժամանակ չի կատարել օրինազանց գործողություն (տե՛ս Էզելինն ընդդեմ Ֆրանսիայի (Ezelin v. France) վճիռ 1991 թ. ապրիլի 26, Շարք Ա, թիվ 202, պարբ. 53, Գալստյան (Galstyan), մեջբերված վերևում, պարբ. 115 և Աշուղյան (Ashughyan), մեջբերված վերևում, պարբ. 90):

44. Սույն գործում, ինչպես և Գալստյանի և Աշուղյանի գործերում, Վերաքննիչ դատարանը չի նշել դիմումատուի կողմից 2003 թ. փետրվարի 23-ի ցույցի ժամանակ ենթադրաբար կատարված գործողությունների մանրամասնությունները, որոնք կարող էին որակվել որպես անօրինական՝ ներառյալ ցանկացած բռնի կամ հանցավոր գործողություն, և սահմանափակվել է մի շատ վերացական եզրակացությամբ՝ նշելով, որ դիմումատուն «խախտել է հասարակական կարգը» (տե՛ս, mutatis mutandis, Գալստյան (Galstyan), մեջբերված վերևում, պարբ. 117 և Աշուղյան (Ashughyan), մեջբերված վերևում, պարբ. 92 և 99): Դատարանի տրամադրության տակ գտնվող ոչ մի այլ նյութ ևս նման մանրամասներ չի պարունակում: Ավելին, պարզ չէ, թե ինչ հիմքերով է Վերաքննիչ դատարանը նշել, որ դիմումատուն մասնակցել է չարտոնված ցույցի՝ հաշվի առնելով այն, որ խնդրո առարկա ժամանակահատվածում Հայաստանում չկար որևէ իրավական ակտ, որը կսահմաներ ցույցեր և փողոցային երթեր կազմակերպելու և անցկացնելու կարգը, ներառյալ նման միջոցառումների թույլատրման կանոնները (տե՛ս Մկրտչյանն ընդդեմ Հայաստանի (Mkrtchyan v. Armenia), գործը (որոշում), թիվ 6562/03, պարբ. 43, 2007 թ. հունվարի 11): Դատարանը արդեն եզրակացրել է վերը նշված Գալստյանի և Աշուղյանի գործերում, որ խաղաղ հավաքների ազատությունների իրավունքի էությունը կխախտվի, եթե Պետությունը չարգելի ցույցը, բայց հետագայում պատասխանատվության ենթարկի վերջինիս մասնակիցներին զուտ մասնակցության փաստի համար, եթե նրանք չեն կատարել որևէ օրինազանց գործողություն, և հանգեց այն եզրակացությանը, որ այսպիսի միջամտությունները «անհրաժեշտ չեն ժողովրդավարական հասարակությունում» (տե՛ս Գալստյանը (Galstyan), մեջբերված վերևում, պարբ. 117 և Աշուղյան (Ashughyan),

մեջբերված վերևում, պարբ. 93): Դատարանը որևէ պատճառ չի տեսնում սույն գործում այլ եզրակացության հանգելու համար:

45. Հետևաբար, տեղի է ունեցել Կոնվենցիայի 11-րդ հոդվածի խախտում:

III. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 6-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄԸ 2003 Թ. ՄԱՐՏԻ 1-Ի ՈՐՈՇՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

46. Դիմումատուն բողոքել է, որ Քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանը թերացել էր ընդունել պատճառաբանված որոշում: Նա վկայակոչում է Կոնվենցիայի 6(1) հոդվածը, համապատասխանաբար սահմանում է.

«Երբ որոշվում են ... նրան ներկայացրած ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի անկախ ... դատաքննության իրավունք ... դատարանի կողմից ...»:

Ընդունելիությունը

47. Դատարանը նախ և առաջ նշում է, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածը կիրառվում է այն դատավարությունների նկատմամբ, որտեղ անձը մեղադրվում է քրեական հանցագործություն կատարելու մեջ մինչև այդ մեղադրանքի վերջնական որոշումը: Այնուհետև Դատարանը հիշեցնում է, որ 6-րդ հոդվածը չի կիրառվում այն դատավարությունների նկատմամբ, որոնք վերաբերում են գործի վերաբացման պահանջի չբավարարմանը: Միայն գործը վերաբացելուց հետո նոր դատավարությունները կարող են դիտարկվել որպես քրեական մեղադրանքի որոշում (տե՛ս Վանյան ընդդեմ Ռուսաստանի (Vanyan v. Russia), թիվ 53203/99, պարբ. 56, 15 դեկտեմբեր 2005 թ.): Դատարանը, սակայն, չի գտնում, որ սույն գործում անհրաժեշտ է որոշել այս խնդիրը, քանի որ 6-րդ հոդվածի համաձայն դիմումատուի բողոքը Քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանում դատաքննության վերաբերյալ բոլոր դեպքերում անընդունելի է հետևյալ պատճառներով:

48. Դատարանը կրկնում է, որ 6(1) հոդվածը պարտավորեցնում է դատարաններին հիմնավորել իրենց վճիռները, սակայն դա չի նշանակում, որ պահանջվում է յուրաքանչյուր փաստարկին տալ մանրամասն պատասխան: Հիմնավորելու պարտավորության սահմանը կարող է որոշման բնույթից ելնելով տարբեր լինել: Բացի այդ անհրաժեշտ է հաշվի առնել, inter alia, փաստարկների բազմազանությունը, որոնք կողմը կարող է ներկայացնել դատարան և Պայմանավորվող Պետություններում գոյություն ունեցող տարբերությունները օրենսդրական դրույթների, սովորութային նորմերի, իրավական մեկնաբանությունների և վճիռներ կազմելու և ներկայացնելու միջև: Այդ պատճառով դատարանի կողմից վճիռը պատճառաբանելու իր պարտականության կատարման հարցը կարող Է որոշվել տվյալ գործի հանգամանքների շրջանակներում (տե՛ս այլ նախադեպերի շարքում Հիրո Բալանին ընդդեմ Իսպանիայի (Hiro Balani v. Spain), 9 դեկտեմբեր 1994 թ., պարբ. 27, Շարք Ա թիվ 303-Բ):

49. Սույն գործում դիմումատուն ենթարկվել է վարչական պատասխանատվության ՎԻՎՕ-ի 172-րդ հոդվածի հիման վրա չարտոնված ցույցին մասնակցելու և հասարակական կարգը խախտելու համար: Այս հիմքը ամրագրված էր Վերաքննիչ դատարանի որոշման մեջ: Նման հանգամանքներում, նույնիսկ եթե այս որոշումը մանրամասնեցված չէր, դա չի նշանակում, որ Վերաքննիչ դատարանը թերացել է մատնանշել դիմումատուին պատասխանատվության ենթարկելու հիմքերը:

50. Հետևաբար գանգատի այս մասն ակնհայտորեն անհիմն է և ենթակա է մերժման համաձայն Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի:

IV. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 14-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄԸ 2003 Թ. ՄԱՐՏԻ 1-Ի ՈՐՈՇՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ

51. Դիմումատուն պնդել է քաղաքական հիմքերով ենթադրյալ խտրականության առկայության մասին կապված նաև Վերաքննիչ դատարանի 2003 թ. մարտի 1- որոշման հետ: Նա հղում է կատարում Կոնվենցիայի 14-րդ հոդվածին, որն ամրագրում է.

«Սույն կոնվենցիայում շարադրված իրավունքներից և ազատություններից օգտվելը ապահովում է առանց խտրականության, այն է՝ անկախ սեռից, ռասայից, մաշկի գույնից, լեզվից, կրոնից, քաղաքական կամ այլ համոզմունքից, ազգային կամ սոցիալական ծագումից, ազգային փոքրամասնությանը պատկանելուց, գույքային դրությունից, ծննդից կամ այլ դրությունից»:

Ընդունելիությունը

52. Դատարանը նշում է, որ իր տրամադրության տակ գտնվող բոլոր նյութերը վկայում են, որ դիմումատուն պատասխանատվության է ենթարկվել չարտոնված երթի մասնակցելու համար: Գործի նյութերում չկա ոչինչ, որ վկայի, որ նա պատասխանատվության է ենթարկվել իր քաղաքական հայացքների համար:

53. Դատարանը եզրակացնում է, որ գանգատի այս մասն ակնհայտորեն անհիմն է և ենթակա է մերժման համաձայն Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի:

V. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 41-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ

54. Կոնվենցիայի 41-րդ հոդվածը սահմանում է.

«Եթե Դատարանը գտնում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի կամ դրան կից Արձանագրությունների խախտում, իսկ համապատասխան Բարձր պայմանավորվող կողմի ներպետական իրավունքն ընձեռում է միայն մասնակի հատուցման հնարավորություն, ապա Դատարանը որոշում է, անհրաժեշտության դեպքում, տուժած կողմին արդարացի փոխհատուցում տրամադրել»:

Ա. Վնասը

55. Դիմումատուն պահանջել է 20,000 եվրո որպես ոչ նյութական վնասի հատուցում:

56. Կառավարություն պնդեց, որ Կոնվենցիայի խախտման ճանաչումը բավարար փոխհատուցում կլինի ցանկացած ոչ նյութական վնասի համար, որը ենթադրաբար կրել է դիմումատուն: Ամեն դեպքում պահանջված գումարը չափազանցված է:

57. Դատարանը գտնում է, որ դիմումատուն, անկասկած, կրել է ոչ նյութական վնաս ցույցին մասնակցելու համար ապօրինի պատժվելու արդյունքում: Առաջնորդվելով արդարացիության սկզբունքով՝ Դատարանը որոշում է դիմումատուին տրամադրել 1,000 եվրո որպես ոչ նյութական վնասի փոխհատուցում:

Բ. Ծախսեր և ծախքեր

58. Դիմումատուն նաև պահանջել է 3,947 ԱՄՆ դոլար (մոտավորապես 3,345 եվրո) և 7,095 ֆունտ ստեռլինգ (ՄԲՖ) Դատարանում կրած ծախսերի և ծախքերի փոխհատուցման համար: Այս պահանջները ներառում են.

(ա) 3,900 ԱՄՆ դոլար որպես իր ներպետական փաստաբանին վճարված գումար (ընդհանուր 26 ժամ՝ յուրաքանչյուր ժամի համար համապատասխանաբար 150 ԱՄՆ դոլար),

(բ) 47 ԱՄՆ դոլար թարգմանչական ծախսերի համար,

(գ) 7,000 ՄԲՖ Միացյալ Թագավորությունում գործող իր երեք փաստաբաններին վճարված գումարի համար՝ ներառյալ KHRP-ի երկու իրավաբաններին և մեկ փաստաբանին վճարված գումարը (ընդհանուր 20 և 40 ժամ՝ յուրաքանչյուր ժամի համար համապատասխանաբար 150 և 100 ՄԲՖ), և

(դ) 95 ՄԲՖ KHRP-ի կրած կազմակերպչական ծախսերի համար:

59. Կառավարությունը պնդեց, որ այս պահանջները պատշաճ փաստաթղթային հիմնավորում չունեն, քանի որ դիմումատուն չի ներկայացրել որևէ պայմանագիր, որը կվկայեր իրավաբանների հետ ենթադրյալ ժամավճարով իրավաբանական ծառայությունների մատուցման վերաբերյալ համաձայնության առկայության փաստի մասին: Ավելին, դիմումատուն օգտվել է չափից ավելի շատ իրավաբանների ծառայություններից, չնայած այն բանին, որ գործն այնքան ծավալուն չէր, որ արդարացներ նման անհրաժեշտությունը: Վերջապես, ներպետական իրավաբանների կողմից ենթադրաբար պահանջված ժամավճարը չափազանց բարձր էր:

60. Համաձայն Դատարանի նախադեպային իրավունքի դիմումատուին տրամադրվում է ծախսերի և ծախքերի փոխհատուցում միայն այն դեպքում, երբ ցույց է տրվում, որ դրանք իրականում կատարվել են, եղել են անհրաժեշտ և իրենց ծավալով ողջամիտ են: Սույն գործում Դատարանը գտնում է, որ ոչ բոլոր հայցվող դատական ծախսերն են եղել անհրաժեշտ և ողջամիտ՝ ներառյալ օտարերկրյա և ներպետական իրավաբանների կատարած աշխատանքի որոշ կրկնությունը, ինչն արտացոլված է համապատասխան ժամանակացույցերում: Ավելին, դատական ծախսերը փոխհատուցվում են միայն այն դեպքում, երբ դրանք վերաբերում են ճանաչված խախտմանը (տե՛ս Բեյելերն ընդդեմ Իտալիայի (Beyeler v. Italy) [ՄՊ], թիվ 33202/96, պարբ. 27, ՄԻԵԴ 2000-I): Դատարանը նշում է, որ սույն գործում ճանաչվել է միայն 11-րդ հոդվածի խախտում, մինչդեռ գրավոր բողոքների ամբողջությունը, ներառյալ՝ սկզբնական գանգատն ու դրան հաջորդող առարկությունները վերաբերել են Կոնվենցիայի մի շարք հոդվածներին և Թիվ 1 Արձանագրությանը: Հետևաբար պահանջը չի կարող բավարարվել ամբողջությամբ, և պետք է կատարվի գումարի էական նվազեցում: Կատարելով իր գնահատումն արդարացիության սկզբունքին համապատասխան՝ Դատարանը որոշում է դիմումատուին տրամադրել 2,000 եվրո կատարված ծախսերի և ծախքերի համար, որը պետք է վճարվի ֆունտ ստեռլինգով և փոխանցվի Միացյալ Թագավորությունում նրա ներկայացուցիչների բանկային հաշվեհամարին:

Գ. Չկատարման դեպքում հաշվարկվող տոկոսադրույքը

61. Դատարանը նպատակահարմար է համարում, որ չկատարման դեպքում հաշվարկվող տոկոսադրույքը պետք է հիմնված լինի Եվրոպական կենտրոնական բանկի

կողմից սահմանված փոխառության տրամադրման առավելագույն տոկոսադրույքի վրա, որին պետք է գումարվի երեք տոկոս:

ԱՅՍ ՀԻՄՆԱՎՈՐՄԱՄԲ ԴԱՏԱՐԱՆԸ ՄԻԱՁԱՅՆ

1. Հայտարարում է ընդունելի Կոնվենցիայի 11-րդ հոդվածի ներքո ներկայացված գանգատը՝ 2003 թ. մարտի 1-ի որոշման վերաբերյալ և անընդունելի՝ գանգատի մնացած մասը,

2. Վճռում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 11-րդ հոդվածի խախտում,

3. Վճռում է, որ

(ա) պատասխանող պետությունը վճիռը Կոնվենցիայի հոդված 44-ի 2-րդ մասի համաձայն ուժի մեջ մտնելուց հետո երեք ամսվա ընթացքում դիմումատուին պետք է վճարի հետևյալ գումարները.

(I) 1,000 (հազար) եվրո որպես ոչ նյութական վնասի փոխհատուցում՝ փոխարկված պատասխանող պետության ազգային արժույթով՝ վճարման օրվա դրությամբ գործող փոխարժեքով, գումարած նշված գումարի վրա հաշվարկվող բոլոր տեսակի հարկերը,

(II) 2,000 (երկու հազար) եվրո, գումարած նշված գումարի վրա դիմումատուի նկատմամբ հաշվարկվող բոլոր տեսակի հարկերը՝ որպես ծախսերի և ծախքերի փոխհատուցում, որը պետք է վճարվի ֆունտ ստեռլինգով Միացյալ Թագավորությունում ներկայացուցիչների բանկային հաշվին,

(բ) վերը նշված եռամսյա ժամկետի ավարտից հետո մինչև վճարման օրը պետք է վճարվի նշված գումարի պարզ տոկոս Եվրոպական կենտրոնական բանկի կողմից սահմանված փոխառության տրամադրման առավելագույն տոկոսադրույքի չափով, պարտավորությունների չկատարման ժամանակահատվածի համար՝ գումարած երեք տոկոս:

4. Մերժում է դիմումատուի արդարացի փոխհատուցման պահանջի մնացյալ մասը:

Կատարված է անգլերեն, գրավոր ծանուցվել է 13-ը հունվարի 2009 թ.՝ համաձայն Դատարանի Կանոնակարգի 77-րդ կանոնի 2-րդ և 3-րդ մասերի:

Stanley Naismith	Josep Casadevall
Քարտուղարի տեղակալ	Նախագահ